

## ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

### Ռ Ո Ւ Ս Ա Յ Ե Կ Ե Ղ Ե Ց Ի

Կաղէտներ ի համագումարում ղեկուցում է արել պրօֆ. Նով-գորոդցնէր. բողոքել է եկեղեցին պետութիւնից բաժանելու առաջարկի դէմ. յայտնելով, որ կրօնը յարգելը պետական կուսակցութեան դիւստոր հիմքն է, այլ և որ եկեղեցին պետութիւնից բաժանելը երկրում մեծ ցնցումներ առաջ կընէ: Պրօֆ. իշխ. Տրուբեցկոյը միանում է ղեկուցողին, յայտնելով, որ Ռուսաց պետութիւնը կազմակերպուել է եկեղեցու օգնութեամբ և սրա օգնութեամբ կարող է ամրապնդուել:

Սինօդի նոր դատախազ է նշանակուել Ա. Վ. Կարտաշեը, որին զանազան բարձրաստիճան հոգևորականներ ողջոյնի հեռագրներ են ուղարկել:

Այժմ հաստատուել է դաւանութեանց նախարարութիւն և Ա. Վ. Կարտաշեը երկրորդն է իւրեւ դաւանութեանց նախարար. առաջինը եղել է Ալէքսանդր Ա.-ի ժամանակ իշխան Գօլիցինը:

Ա. Վ. Կարտաշեը ծագումով գիւղացի է. Ուրալի շրջանից. ստացել է հոգևոր կրթութիւն, վերջացրել է հոգևոր ճեմարանը. տալա մնացել է այնտեղ և ընտրուել դօցնետ, ուսուցչապետ: Հոգևոր վարչութիւնը տեսնելով տաղանդաւոր գիտնականի ընդունակութիւնը առաջարկեց կուսակրօն հոգևորական դառնալ և արքեպիսկոպոսական աթոռ ստանալ, սակայն Կարտաշեը մերժեց: Տեսնելով, որ հոգևոր վարչութիւնը ճնշում է գործ դնում գիտութեան ազատ զարգացման վրայ թողեց ճեմարանը և սկսեց դասախօսութիւններ կարդալ կանանց բարձր կուրսերում:

Կրօնա-փիլիսօփայական ընկերութիւնը նրան նախագահ ընտրեց: Յեղափոխութեան ժամանակ նա աւագ դատախազի օգնական նշանակուեց, իսկ այժմ արդէն դաւանութեանց նախարար:

Սրա վրայ է ծանրանում եկեղեցական ժողով գումարելու խնդրի իրականացումը:

Մոսկուայում օգոստոսի 15-ին գումարուելի և կեղեցական ժողովը լինելով Մոսկուայի առաջնորդարանում: Առաջին նիսար լինելու է ս. Փրկչի տաճարում (Храмъ Христа Спасителя): Մոսկուայի միտրոպոլիտն արդէն հրատարակել է ժողովի բացման հանդիսակատարութեան կարգը:

#### Կ Ա թ Ո Ղ Ի Կ Ե Կ Ե Ղ Ե Տ Ի

Պապի դիմումը կոռուղ պետութիւններին.— Պատերազմում մասնակցող ժողովուրդների գլխաւորներին. Պապական աթոռը բարձրանալու հէնց սկզբից, որը տեղի ունեցաւ Եւրոպայի գլխին եկած սարսափելի պատերազմի արհաւիրքների ժամանակ մենք երեք վճիռ ենք ընդունել. բոլորովին անկողմնապահ վերաբերուել բոլոր կռուողներին, ինչպէս վայել է նրան, ով բոլորի հայր է, և ով իւր բոլոր որդիներին միատեսակ սիրով է սիրում. անդադար աշխատել, որքան հնար է, բոլորովին բարիք անել և այն առանց որևէ երեսպաշտութեան և անկախ նրանից թէ ով որ կրօնի կամ ազգութեան է պատկանում, ինչպէս այդ պահանջում է Մեզնից ողորմածութեան օրէնքը և Գրիստոսից մեզ վրայ դրած հոգևոր բարձրագոյն աստիճանը. վերջապէս ինչպէս պահանջում է Մեզ վրայ դրուած հաշտարարի առաքելութիւնը, անուշադիր չթողնել որ և է բան, որ Մեր իշխանութեան տակ է գտնւում, որով կարելի է նպաստել այդ ղժբախտութեան վախճանի արագացմանը և փորձել ժողովուրդներին և նրանց առաջնորդներին թեքել աւելի չափաւոր վճիռների և խաղաղ քննելու հաշտութիւնը, «արդար և անխախտ» հաշտութիւնը:

Ով հետեւել է Մեր այս դիրախտ երեք տարիների ընթացքում կատարուած գործունէութեանը, նա հեշտութեամբ կհամոզի, որ եթէ Մենք միշտ ձգտել ենք հաւատարիմ մնալ Մեր վճռին՝ բոլորովին անկողմնապահ լինել և Մեր ոյժերը նուիրել ենք բարեգործական տշխատանքի, ապա Մենք չենք դադարել կռուող ժողովուրդներին և կառավարութիւններին կոչելու նորից եղբայրանալու, թէև Մեր ոչ բոլոր այդ բարձր նպատակին հասնելու համար ձեռք առաց միջոցները, հրատարակին չեն յայտնուել: Պատերազմի առաջին տարուայ վերջին Մենք դիմել ենք կռուող ազգերին ամենահամոզկեր կոչով, այլ և ցոյց ենք տուել այն ճանապարհը, որով պէտք է գնալ, որ հասնուի հաստատուն և բոլորի համար պատուաբեր խաղաղութեան: Դժբախտաբար Մեր կոչը չլսուեց և պատերազմը իւր բոլոր արհաւիրքներով նախկին կատաղութեամբ շարունակուեց դեռ ևս երկու տարի: Պատերազմը

նոյն իսկ աւելի անգութ դարձաւ և տարածուեց երկրի վրայ, օդում ու ջրում և մարդկութիւնը տեսաւ, թէ ինչպէս անպաշտպան քաղաքների վրայ, խաղաղ գիւղերի և նրանց անմեղ բնակիչների վրայ եկաւ վիշտը, կործանումն ու մահը: Այժմ էլ ոչ ոք չի կարող պատկերացնել, որքան կրազմապատկուեն և կուժեղանան բոլորի տառապանքները, եթէ արիւնալի հոռամեակին կաւեւանան նոր ամիսներ կամ գուցէ և նոր տարիներ: Միթէ կիրթ աշխարհին վիճակուած է դառնալ դիակներով ծածկուած դաշտ կամ այնքան հրաշալի և ծաղկած Եւրոպան, ենթարկուելով ընդհանուր խելագարութեան, կշարունակէ աւելի գլուխը դէպի անդունտ իր կործանմանը նպատակելով:

Այսպիսի վտանգաւոր դրութեան ժամանակ, այսպիսի սարսափելի վտանգի առաջ, Մենք, չունենալով ոչ մի քաղաքական նպատակ, չառաջնորդուելով կոռուղ կողմերի խնդրանք կամ շահերով, այլ առաջնորդուելով Մեր բարձր պարտականութեան գիտակցութեամբ, իբրև հաւատարիմ հայր, առաջնորդուելով Մեր զաւակների խնդիրներով, որոնք խնդրում են Մեր միջամտութիւնը և սպասում Մեր խաղաղարար խօսքին առաջնորդուելով մարդասիրական զգացմունքով և բանականութեամբ, նորից հաշտութեան ենք կոչում, նորից դիմում ենք նրանց, ովքեր իրենց ձեռքում պահած ունեն ժողովուրդների բախտը: Բայց չցանկանալով սահմանափակուել ընդհանուր տարակուսանքներով, որին դիմել էինք առաջ պայմաններից դրառւած, այժմ Մենք ուզում ենք հրապարակ գալ աւելի որոշ և գործնական առաջարկներով և կոռուղ ժողովուրդների կառավարութիւններին հրաւիրել, համաձայնութիւն կայացնել հետեւալ խնդիրների նկատմամբ, որոնք ըստ երևոյթին պէտք է լինին հաստատուն և արդար հաշտութեան հիմք, թոյլ տալով, որ կառավարութիւնները աւելի պարզ որոշեն և բացայայտեն այդ խնդիրները: Ամենից առաջ հիմնական կանոն պիտի լինի այն որոշումը, որ զէնքի նիւթական ոյժի տեղը պիտի բռնէ իրաւունքի բարոյական ոյժը: Այստեղից էլ հետևում է, որ պէտք է ընդհանուր համաձայնութիւն պիտի կայանայ միաժամանակ ընդհանուր սպասուողինումը կրճատել ու համաձայն այն կանոնների և երաշխաւորութիւնների, որոնք կմշակուեն համաձայն այն չափի, որ անհրաժեշտ է ամէն երկրի համար կարգը պահպանելու: Ապա, փոխանակ զօրքի պէտք է արբիտրաժ լինի, որը պէտք է կատարէ խաղասիրական բարձր գեր, այն ձևով, որ պէտք է մշակուեն ընդհանուր համաձայնութեամբ և որը միջոցներ կունենայ ստիպելու այն պետութիւններին, որոնք կհրաժարուեն արբիտրաժի միջոցով լուծելու միջազգային հարցերը:

կամ կհրաժարուեն այդ հարցերի նկատմամբ եղած վճիռներին ենթարկուելուց՝

Երբ այդ ձևով իրաւունքի իշխանութիւնը կհաստատուի, պէտք է վերացուեն այն բոլոր արգելքները, որոնք արգելք են հանդիսանում ժողովուրդների ճանապարհների հաղորդակցութեան, այլ և պէտք է որոշուեն այն կանոնները, որոնք ապահովում են ծովերի նկատմամբ իսկական չէզոքութիւն և ազատութիւն: Այսպիսով մի կողմից կչէզոքացուեն բաղմաթիւ այնպիսի պատճառներ, որոնք կարող են ընդհարումներ առաջ բերել, միւս կողմից ժողովուրդների առաջ կբանայ բարեկեցութեան և յառաջդիմութեան նոր աղբիւրներ:

Ինչ վերաբերում է պատերազմի պատճառով աւերածութիւնների վերականգման և նրանից առաջ եկած ծախքերի հատուցման, Մենք այլ ճանապարհ չենք գտնում այդ հարցի լուծման, քան այն, որ ընդհանուր սկզբունք լինի ընդհանուր փոխադարձ համագործակցութիւնը: Այսպիսի ելքը արդարացի կլինի ընդհանուր զինաթափութիւնից առաջ եկող անշափ բարիքներով մանաւանդ որ միտք էլ չի ծագի շարունակելու այդ արիւնահեղ կոտորածը բացառապէս տնտեսական պատճառներից զրդուած: Եթէ եղակի դէպքերում բաւարար հիմքեր կգտնուին այդ ընդհանուր սկզբունքից շեղուելու, ապա այդպիսի դէպքերը պէտք է կշռադատուին յատուկ զգուշութեամբ և արդարամտութեամբ:

Սակայն այդ հաշտարար համաձայնութիւնը, իրենց անթիւ առաւելութիւններով, անկարելի է իրագործել առանց գրաւած երկրամասերը փոխադարձաբար վերադարձնելու պայմանին: Ուստի Գերմանիան պէտք է ամբողջովին դատարկէ Բելգիան միաժամանակ քաղաքական, զինուորական և տնտեսական կատարեալ անկախութեան կատարեալ երաշխիքներ տալ բոլոր պետութիւնների նկատմամբ, այլ և դատարկէ Ֆրանսիական հողը. պատերազմող պետութիւնների միւս խումբը անհրաժեշտ է, որ դատարկէ Գերմանական գաղութները:

Ինչ վերաբերում է միւս հողամասերի հարցերին, օրինակ նրանց, որոնք Իտալիայի և Աւստրիայի Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ վէճի առարկայ են, ապա յոյս պէտք է ունենալ, որ պարզ գիտակցած հաստատուն խաղաղութեան առթիւ առաւելութիւնները որոնք կապուած են զինաթափութեան հետ, կոռուղ կողմերը կաշխատեն իրագործել այն հաշտեցնող ձևով իբրեւ անհրաժեշտ չափ ընդունելով թէ արդարութեան սկզբունքը, թէ գործնական հնարաւորութիւնները, համաձայն այն բանի, որ առաջ ասել ենք ժողովուրդների ձգտման մասին, այսինքն մասնաւոր

շահերը հաշտեցնել ընդհանուր մարդկային համայնքի բարօրութեան հետ:

Արդարութեան և անկողմնակալութեան սոյն ոգով պէտք է քննութեան ենթարկուեն միւս քաղաքական և հողամասերի հարցերը, այն է Հայաստանի, Բալկանեան թերակղզու պետութիւնների և նախկին Լեհական պետութեան վերաբերեալ հողերի, դէպի որը պէտք է զբաղուեն ի միջի այլոց, շնորհիւ նրա պատմական պանծալի տւանդութիւնների և սոյն պատերազմի ընթացքում կրած տառապանքների, բոլոր ժողովուրդների համակրանքը:

Այս են այն գլխաւոր հիմքերը, որոնց վրայ հաւատում ենք, թէ կկառուցի ապագայ միջազգային փոխյարաբերութիւնների վերակազմութիւնը: Սրանք անկարելի կզարձենն ապագայում նման ընդհարման կրկնուելը և հնարաւոր կզարձենն վճռելու տնտեսական հարցը այն ուղղութեամբ, որ օգտակար լինի ապագայի և կոռուղ պետութիւնների նիւթական բարեկեցութեան համար:

Այս առաջարկութիւնները ներկայացնելով ձեզ, որ այս ողբերկական ժամին կոռուղ ժողովուրդների բաղտն էք ղեկավարում, Մենք ոգեորուած ենք այն ուրախ յոյսով, թէ դրանք կընդունուին. և մօտ ապագայում այդ սարսափելի պատերազմը կվերջանայ, պատերազմ, որը որքան շարունակուում է այնքան աւելի անմիտ կոտորած է դառնում: Ամբողջ աշխարհը բացի այդ կընդունի, որ դէնքի պատիւը ոչ այս, ոչ այն կողմի համար չի արատաւորուի:

Ուրեմն Մեր խնդրին խուլ մի մնաք, ընդունեցէք հայրական հրաւերը, որով Մենք դիմում ենք ձեզ յանուն Փրկչի, Աշխարհի Տիրոջ: Ի նկատի ունեցէք ձեր ծանր պատասխանատւութիւնը Աստուծոյ և մարդկանց առաջ: Ձեր վճիռներից է կախուած բազմաթիւ ընտանիքների և երիտասարդ զինուորների բարեկեցութիւնը և ուրախութիւնը:

Բարութիւն արէք ժողովուրդներին, որոնց նկատմամբ ձեզ վրայ անհրաժեշտ պարտք կայ՝ ապահովել նրանց բարեկեցութիւնը: Թող Տէրը ձեզ ներշնչէ այնպիսի վճիռ, որ համապատասխան կլինի նրա սուրբ խօսքին: Թող երկինքը ձեզ ներշնչէ, որ Դուք ձեր ժամանակների գովեստին արժանանալով ձեզ համար և ապագայ սերնդների համար խաղաղարարի գեղեցիկ անունը վաստակէք: Սերտ միանալով աղօթքով և տաաշխարութեամբ բոլոր հաւատացեալ հոգիներին, որոնք տանջուում են խաղաղութեան համար, Մենք խնդրում ենք, որ Աստուածային Միտքը ձեզ լուսաւորէ իր լուսով և ցուցմունքով:

Վատիկան. օգոստ. 1, ն/տ. 1917 թ.»

## Վ Ր Ա Ց Ե Կ Ե Ղ Ե Ց Ի

Վրաց եկեղեցու անկախութիւնն արդէն ժամանակաւոր կառավարութիւնը ճանաչել է: Վրաց հոգևորականութիւնը առաջին հերթին պատրաստուում է իր եկեղեցու կանոնների համեմատ ընարել կաթողիկոս:

Այդ նպատակով նշանակուած են խորհրդածութիւններ զանազան քաղաքներում: Տփլիսից զնալու են մարդիկ ընտրական գործը կազմակերպելու: Եկեղեցական ժողովը նշանակուած է օգոստոսի 15-ին, իսկ կաթողիկոսի ընտրութիւնը՝ սեպտեմբերի 8-ին:

Յուլիսի 30-ին Բութայիսում հոգևորականների և աշխարհականների ու Վրաց եկեղեցու ժամ. կառավարութեան ներկայացուցիչների մէջ համաձայնութիւն է կայացել Վրաց եկեղեցու կաթողիկոսական ընտրութեան, թեկնածունների և եկեղեցական ժողովի գումարման խնդիրների առթիւ:

Օգոստոսի 2-ին Վրաց եկեղեցու ժամ. կառավարութեան 4 ներկայացուցիչ տեսակցութիւն են ունեցել Կովկ. ժամ. կառավարութեան հետ և յայտնել, որ Անդրկովկասում կայ 169 ուսական ծխական համայնք, իսկ վրացական 1,365. ուստի և յատուկ բարձր հոգևորական ուսու վարիչ նշանակել Անդրկովկասում կարիք չկայ. իսկ եթէ ժամ. կառավարութիւնը այնուամենայնիւ պնդէ որ պէտք է կառավարիչ, այն ժամանակ թող նրա աթոռը հաստատուի Վլադիկաւկազում և նրա տիտղոսում չլինի ոչ մէկը այն մակդիրներից, որ ունենալու է Վրաց կաթողիկոսը:

Սազարէջ գիւղում տեղի է ունեցել հոգևորականների ժողով, որը միջնորդութիւն է ուզում յարուցանել ժամ. կառավարութեան առաջ գիւղական քահանաների ոռճիկը պետական գանձարանից ստանալու: Քահանային 200 ռ. ամսական, սարկաւազին 150 ռ. դպրին 100 ռ.

Ժամանակաւոր կառավարութիւնը որոշել է.—1) Ռուսաց պետութեան մէջ գտնուող վրաց ուղղափառ եկեղեցու համար ժամանակաւոր կանոններ սահմանել. 2) կառավարութեան որոշած

յանձնաժողովին յանձնարարել մշակել վրաց էկզարխութեան ենթակայ պատշաճ եկեղեցական հիմնարկութիւնները զատելու և յանձնելու վրաց կաթողիկոսութեան իրաւասութեան, այլ և որոշել այն չափը և հիմունքները, որոնց հիման վրայ պետութեան գանձարանից պէտք է նպաստ տրուի պահպանելու վրաց ուղղափառ եկեղեցին. պայմանով, որ յանձնաժողովի որոշումները տրուին ի հաստատութիւն ժամ. կառավարութեան 3) Մինչև համաձայն սոյն որոշումները վրաց եկեղեցու կազմակերպումը և մինչև դաւանութեանց նախարարութիւն կազմելը սինօդի աւագ դատախազին թողնել վրաց էկզարխութեան նկատմամբ եղած իշխանութիւնը:

Վրաց եկեղեցու կառավարութեան համար մշակուած ժամանակաւոր կանոններ, 1) Վրաց եկեղեցու մէջ են մտնում Քարթուքիան ցեղի բոլոր ուղղափառները, որոնք ապրում են Ռուսաց պետութեան սահմաններում. 2) Անդրկովկասեան օսետիներին, արխազների համայնքները, կարող են վրաց եկեղեցու մէջ մտնել իրենց ցանկութեամբ: 3) Վրաց եկեղեցու սրբազնագործ պաշտօնեաները կարող են կատարել այն ուղղափառների կրօնական պահանջները, որոնք պատկանում են վրաց ազգութեան ինչպէս և ուղղափառ քահանաները կարող են կատարել վրացիների կարիքները: 4) Վրաց եկեղեցին բաժանւում է թեմերի. վերջիններս էլ համայնքների, թէ առաջինների և թէ երկրորդների թիւը որոշում է առաջին հրահանգով, որը հաստատում է կառավարութիւնը. 5) Վրաց եկեղեցու գլուխն է Մցխէթի արքեպիսկոպոսը համայն վրաց ժողովրդի կաթողիկոս—պատրիարքը, որն ընտրւում է վրաց եկեղեցու կանոնների համաձայն:

6) Պատրիարք կաթողիկոսի ընտրութիւնը, մինչև իւր աստիճանին բարձրացումը պետական բարձր իշխանութեան հաստատութեանն է ենթարկւում. 7) Պատրիարք կաթողիկոսին և իւր նախագահութեամբ գումարուած եկեղեցական ամբողջ իշխանութիւնը, որը իրաւանացւում է եկեղեցական վարչական մարմինների միջոցով և համաձայն օրէնքների: 8) Ռուսաց պետութեան սահմաններից դուրս գտնուած բոլոր աւտօկէֆալ եկեղեցիների հետ պատրիարք—կաթողիկոսը յարաբերութիւն պահում է արտաքին գործոց նախարարութեան միջոցով: 9) Վրաց կաթողիկոսը, եկեղեցական հիմնարկութիւնները, բարձր հոգևորականութիւնը, մայր եկեղեցու, այլ ծխական և վանական հոգևորականութիւնը ռոճիկ են ստանում պետական գանձարանից օրէնքով

սահմանուած հիմունքներով և քանակով: 10) Վրաց եկեղեցու հիմնարկութիւնները օգտուում են իրաւական անձի իրաւունքներէց համաձայն ընդհանուր քաղաքացիական օրէնքների: 11) Վրաց եկեղեցու հոգևոր դպրոցական հիմնարկութիւններին կարող են տրուել պետական դպրոցական հիմնարկութիւնների իրաւունքներ: 12) Վրաց կաթողիկոսութեան ներքին գործավարութեան և հոգևոր դպրոցների դասաւանդման լեզուն վրացերէնն է:

13) Ամուսնական գործերում և քաղաքացիական դրութեան ակտերի որոշման մէջ վրաց եկեղեցին ղեկավարւում է ընդհանուր օրէնքներով: \*

Օգոստոսի 4-ին վրաց կաթողիկոսութեան տեղապահ Լէօնիդ Խախկոպոսի նախագահութեամբ տեղի ունեցաւ ժողով վրաց եկեղեցու կազմակերպութեան գործը կանոնաւորելու առթիւ: Որոշուել է եկեղեցական ժողով գումարել սեպտեմբ. 8-ին Տփլիսում, վրաց եկեղեցու կանոնադրութիւնը մշակելու և հաստատելու և կաթողիկոս ընտրելու: Հոգևորական պատգամաւորներ ընտրելու են օգոստոսի 27-ին:

Որոշուել է խորհրդակցական ժողով գումարել հրաւիրելով վրաց եկեղեցու հոգևորականութեան գործադիր մարմնի բոլոր անդամներին և աղգային կուլտուրական հիմնարկութիւնների ներկայացուցիչներին քննելու եկեղեցական ժողովում դրուելիք օրակարգը:

